Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՑՈՅ 16 ՄԵՀԵԿԱՆ 4383 — Հ. Տ 22 ՓԵՏՐՈՒԱՐ 1892 ԹԻՒ 10

ԴԱՆԱՐԻՍ

LE DANUBE

ՀԱՆԴԷՍ ԵՕԹՆՕՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 բուպլի թղթադրամ։

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 բուպլի թղթադրամ։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մանուկման տպագր 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Թուրքերէն լեզուով։

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal « TANOUP »
(BULGARIE) ROUSTCHOUK

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՀԱՆԴԷՍ

ՍՈՒՐԲ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ ԱՒԱՐԱՅՐԻ

1892 ՓԵՏՐ. 15, ՖՕՐԵՇԱՆ
(ՌՈՒՄԱՆԻԱ)

Ամսոյս 11ին քաղաքիս մեր Ազգ. վարժարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Ղեւոնդեանց Նահատակութեան տօնի յուզիչ հանդէսն, զոր ամենայն սրտի սաստ մեր Հայեր կատարելու գեղեցիկ և օրինակելի սովորութիւնն ունին։ Սովորականէն աւելի շքեղութեամբ եկեղեցական արարողութենէն յետոյ, հանդէսն սկսաւ այդ Հայրենասէր Նահատակաց անմոռանալի անուանց Նուիրեալ վարժարանի ուսումնասիրահին մէջ, որ աւուր պատշաճի զարդարուած էր մեր Ազգի հին փառքեր ներկայացնող մեծամեծ դէմքերով, յորս Հայրենասիրէդ Նուիրեալ Ազգ. սիրուն դրօշակն ալ իւր ինքնուրոյն փայլն ունէր։ Հանդէսն կատարուեցաւ երգերով, արտասանութեամբք և ճառերով ընդմիջաբար և վերջացաւ երկու Ա.Ա. քահանայից օրհնութեամբք ու յիշատակաց քաղցր տպաւորութեամբք։

Այդ ուրախալի տեղեկութիւնք ազդօրա «Դանուբ»ին ազնիւ ընթերցողաց ևս հաղորդելու արժան համարեցայ յրելով առ Ձեզ 'ի հրատարակութիւն հետեւեալ ճառն՝ զոր, 'ի միջի այլոց, խօսեցաւ ուսանողներէն աշխոյժ պատանի մը։

Պատուական Հանդիսականք,

«Այսօր մենք ամենքս ալ. Ազգային երախտագիտական ջերմ զգացումներէ շարժեալ, համախմբեալ եմք այս նուիրական յարկի ներքեւ, ուր միահամուռ երգելով ու ճառելով կը հրճուիմք եւ միանգամայն կը յուզուիմք յանուն Աւարայրի մեր Հայ նահատակաց, որոնք Ե.-որդ դարուն առ 'ի սէր սուրբ կրօնի եւ հայրենի ազատութեան, դիւցազնարար պատերազմեցան ընդդէմ արեւապաշտից։ Սոքա ահագին բանակներով եւ զինու զօրութեամբ կը սպառնային Քրիստոսի անունն Հայաստանէն վերցնել եւ կործանել Հայոց աշխարհի սրբազան տաճարներ, որոյ տեղ բարձրացուցեալ հեթանոսական կռատուններ, եւ այսպէս յաջոդիլ մեր Արմենական Թանկագին Ազգն դարձընել արեւապաշտութեան. սակայն նախախնամութեան արիւն աչկունքն յարաժամ կը հսկէին անդրանիկ Քրիստոնեայ Հայաստանին վերայ, որ ժողովրդեան ծոցէն դուրս եկան Վարդանայ եւ Ղեւոնդի նման արիասիրտ եւ Հայրենասէր, որք Եպիսկոպոսներով եւ բազմաթիւ նախարարներով ընդհանուր ժողով մը կազմեցին Արտաշատու Մայրեկեղեցւոյ խորանին յառաջ. հոն իրաչին եւ Աւետարանին վերայ երդում ընելով՝ ուխտեցին մինչեւ իրենց արեան վերջի կաթիլն չը խնայել 'ի սէր Ս. Կրօնի եւ Հայրենի ազատութեան։ Միաձայնութեամբ իսկոյն պատուեցին

Ցազկերտի մահաշունչ հրովարտակն ու ձեռամբարձ օրենքին Հայկական բանակաց ընդհանուր սպարապետն եւ յայնժամ Մամիկոնեան տան անվեհեր առիւծն՝ քաջասիրտ եւ Հայրենասէր Վարդան, հոգւով սրբով եւ սրով սպառազինեալ՝ անցաւ Հայ բանակաց գլուխը եւ մոնչելով սլացաւ, կայծակի արագութեամբ, յԱւարայր հոն Տղմուտ գետոյ եզերքը հասաւ նաեւ խաչազէն Ղեւոնդ երէց, զինուց անագին չառաջմամբ զարնուեցան Պարսից մոխրակրօն ազգին դէմն։ Սոսկաց արքայն յազկերտ իւր գահուն վրայ եւ համայն Պարսկաստան ահ եւ դողումն կալաւ իւրեանց բանակաց պարտութեամբն, երբ կորովին Վարդանայ հատու սուրն մերկացաւ պատերազմի դաշտին վրայ եւ ցայտեց կարմիր արիւնն Վարդանանց որք թէպէտեւ մեռան. բայց եւ այնպէս նոցա արեան չնորհիւ՝ ապրեցաւ ցա՛յսօր եւ պիտի ապրի յաւիտեան սրբակրօն Հայոց աշխարհն։ Կանգուն մնացին եւ պիտի մնան, Աստուծով Հայաստանի հազարաւոր վանօրայք եւ հոյակապ տաճարներ եւ վերջապէս, Հայութեան վերածնմամբ մենք այսօր ազգովին, կը վայելեմք նոցա զոհաբերութեանց քաղցր պտուղներն։

Պատուական հանդիսականք, ահա Ե. յորդ դարէն սկսեալ՝ մինչեւ ցա՛յսօր Հայաստանեայց Եկեղեցին, մի սրատաւուն երախտագիտութեամբ, իւր «նորահրաշ պսակաւոր եւ զօրագլուխ առաքիչնեաց» սքանչելի երգովն Ս. Ղեւոնդեանց եւ Ս. Վարդանանց նահատակութեան տարեդարձն անխափան կը տօնէ եւ Հայ Ազգն ալ ամեն տեղ ու ամեն տարի, այսպիսի դպրոցական գեղեցիկ հանդէսներով կրկին կը յարգէ զիշատակն Շաւարշական դաշտի այդ արեամբ ներկեալ նահատակացն, որոց Աստուածատես հոգիներն, ի վերուստ, կը հսկեն եւ միշտ կը գուրգուրան նաեւ Ռումանիոյ Հայոց վերայ, քաղցր եւ նուիրական պարտաւորութիւն մը յիշեցնելով անոնց Ազգաւոյն վարժարանաց օր ըստ օրէական զարգացման հոգ տանիլ եւ դաստիարակել իւրեանց զաւակները, Հայ Ազգին յաւուրս, այն հարազատ ուղղութեան, յորում ծնան եւ մնան մեր փառաւոր նախնիքն՝ անաղարտ պահելով եւ պահպանելով մեր ցանկալի Հայրենեաց ամեն նուիրագործեալ չէնք, չինութիւնք եւ առանդութիւնք։

Այս պատեհագոյն առթիւն ի դիմաց Ս. Ղեւոնդեան վարժարանի բոլոր սանուց մեր ջերմագին չնորհակալութիւնն եւ երախտագիտութիւնն կը յայտնեմք Ձեզ՝ ազնիւ Ֆօքշանցւոյդ եւ միանգամայն պատուարժան հոգաբարձութեան, որ մեր յառաջադիմութեան համար բնաւ երբէք ջանք եւ զոհողութիւնք չը խնայեր՝ յօգուտ ազգային, յուրախութիւն ամեն հայրենասիրաց եւ մասնաւորապէս մեր Ֆօքշանցի դպրոցասէր Հայ ծնողաց։

*
* *

Ցիրաւի սոյն օրինակ հանդէսներն ոչ թէ միայն նուիրական պարտաւորութիւն պէտք է համարել այլ նաեւ անհրաժեշտ են Ռումանիոյ մեր Հայոց համար, Ազգային բազմադիմի տեսակէտներով։

ԱՐՄԵՆՈՎԻՉ

(Շարունակութիւն 9րդ թիւին և վերջ։)

ՊՐԱՒԼԱ 8 ՓԵՏՐ. 1892

Հարկ է սակայն յիշել յաւ՛ի սիրա, զաւառացի պանդուխտների խղճալի և միանգամայն անպատուաբեր վիճակը. բաղում՝ ի սոյանէ 10–15–20 տարիներէ՝ ի վեր կը դեգերին՝ ի վերին և՝ ի սարին Դանուբ և իրենց հայրենի տանց նկարագիր նամակաց փոյթ և կարևորութիւն չընծայելէ՝ ի զատ հոս ապօրէն կենակցութիւններ հաստատած են և հետևաբար ինասաբեր իրենց տարադրիլն՝ ի հայրենիս, իւրեանց տաժանակիր աշխատութեան դիմելն եղող քրտանց արդիւնքը կը մսխեն ցոփութեամբ, շռայլութեամբ և խաղամոլութեամբ, վրատահ ներկային վրայ և անկասկած ապագային։ Այլ երբ կը սպառի Հերքուլեան դրամագլուխը և մի քանի տարուան մէջ այդ վիթխարի Հայաստանցին կմախք կը դառնայ և իր խոնաւ բնակութեան տեղոյ դարշ մթնոլորտը՝ ինասակար օդը ծծելով կը հիւծէ և կ՝աւանդէ հոգին, նորա մարմինը՝ ի հող ամփոփելու համար չունի՝ ի ծոցին մեռելատախտն. յայնժամ իւր հայրենակիցք կը հոգան դէթ անհրաժեշտ ծախսերն մեռելոյն։

Գալով ամուսնութեան՝ տեղւոյս համար ամենափոփոխ խնդրոյն, կուսանք Հայոց և երիտասարդք կը պսակուին Ռումանաց և այլ Քրիստոնէից հետ, և այսու Հայն է որ միշտ կը տուժէ, ոմանք քաղաքային ամուսնութեամբ կը վերապսակուին և տէր կը լինին զաւակաց. և ոմանք ալ ապօրինի կենակցութիւններ կը հաստատեն տէր լինելով որդւոց, պտուղք ծածուկ ամուսնութեան։

Ցայսմիջ է թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ օրէնքը կ՝արգիլէ կրօնականաց՝ այսպիսեաց բնակարաններն իսկ այցելել և անարժան կը համարի մը-կրաութեան՝ սոցա կենակցութենէ ծննդոց, այլ և չի թոյլատրէր՝ ի հոգևոր մխիթարութիւն և՝ ի Ս. հաղորդութիւնն։ Սոցա անուններն իսկ կրնայի յիշել այլ առ այժմ զանց կ՝առնում։ յուսալով որ յապագային չեն կրկնուիր սոյն օրինակ անպատեհ դէպքեր և կը ղղջան. յիշելով իրենց անձկալի հայրենիքը, կանայն ու որդիքը որք կարօտակէզ կ՝սպասեն իրենց վերադարձին։

Ասա որ և է ընկերութիւն և բարեգործական ձեռնարկութիւններ չկայ. ինչպէս պարահանդէս, թատերական ներկայացում, ընտանեկան երեկոյթք են. իմանալով որ Բուսճուդցի մի քանի բարեպաշտ տիկնայք իւրեանց ձեռաց աշխատութեամբ սկսած

են պատրաստել տեղւոյս Եկեղեցւոյն համար մի քանի ծածկոյ են. որով բարի և նախանձելի օրի նակ կը հանդիսանան տեղւոյս անփոյթ կանանց։

Սոյն գրութիւնս վերջացնելէ առաջ, երկու ա մենակարևոր խնդրոց վրայ ևս կ'ուզեմ խօսիլ. այն է Ռումանիոյ մերազնէից ամուսնութեան խնդիրն և առաջնորդի մը անհրաժեշտ պէտքն։

Ամուսնութեան նկատմամբ Հայ օրիորդաց և երիտասարդաց Ռոման կամ այլ Քրիստոնեայ ազգաց հետ անխտիր խնամութիւն է նախապատճառ Ռումանիոյ Հայոց անյիշատակ կրօտեան։ Հայք սակաւաթիւ լինելով ամենուրեք Ռումանիոյ քաղաքաց մէջ և ցրուած կ'ապրին հեռի Եկեղեցիէ և վարժարանէ բնականաբար յարաբերութիւն քիչ կ'ունենան իրարու հետ և երբեմն ալ չեն ճանչեր իսկ. քաղաքական սովորոյթք և բարուց ազդականութիւնք յաճախադէպ գոլով ամուսնութիւնք ալ կամ տեղի չեն ունենար եւ կամ միջնորդի պէտք չեն զգար. այսպէս Հայ երիտասարդն ալ կամ օրիորդը չ'կրնալով գտնալ իր մատիպարը կը դիմէ ուրիշի։

Ամուսնութեան մասին այս անխարութեանը ո՛չ այնքան աւելի կուլ կ'երթայ Հայ երիտասարդը քան օրիորդը որ յաճախ չը կրնալով գտնալ ամուսին 'ի Հայս, ծնողք կը յօժարին մի ո և է Քրիստոնէի հարմացնել, բաւ է որ մարդ մ'է փեսայացուն. այլ Հայուն տրուած նախատինքը ու՞ր թողում՝ որ գնչուէ մը աւելի անախորժ է Հայ օրիորդին. մանաւանդ երբ սա ամենաբարձր դասակարգի կը պատկանի. Հայ Աստղիկը ֆոթոթի կամ ֆոֆի մէջ ընկղմանած կ'արշաւէ, առարկայ ընալով ընդհանուր հիացման. պուլվարներու, փառքերու, պարահանդէսի, թատրոնի և այլ զբօսատեղեաց մէջ պատահմամբ երբ կը տեսնայ գեղատեսիլ կամ Մոնկոլեան դէմք մը որ վայելուչ և ճաշակաւ հագուած է. ալ կը բաւէ, ի՞նչ հարկ փնտռել թէ ի՞նչ ազգէ է, թէ ունի՞ բարոյական և հոգեկան արժանիք և բարեկիրթ դաստիարակութիւն, ո՛չ, սոնք անպէտ են մեր Արմենուհւոյն, որ արդէն գտած ըլալ կը կարծէ իր սրբոցին հատորը՝ Ռոման երիտասարդ մը, Ցոյն մը, Ռուս մը, Գերմանացի մը, վերջապէս ինչ որ մարդ—Քրիստոնեայ է Հայութեան վերջին ատկայծ նշոյլներն համարուած մի քանի Հայկական յատկանիշներն կը լինին իւղասպառ, մօտաւոր տարտեռ ամուսնութեամբ մը։

Այս նիւթին վրայ, աւելի հասուն և փորձառու մերազնէից մանրամասն գրելին յուսալով համառօտ իմն կ'անցնիմ երկրորդ խնդրոյն այն է Առաջնորդական խնդիրը։

Քահանայի մը կամ Առաջնորդի մը պաշտօնն աւելի ազդեցիկ և օգտակար կրնար ըլալ, երբ իր հօտին վրայ ունեցած հեղինակութիւնը ճանչցուէր, զի դժբաղդաբար Ռումանիոյ մի քանի քաղաքաց Հայ քահանայներն աշխարհականի մը չափ արժէք ունի յաճախ։ Երբ հարկ լինի Պատրիարքարանի արտօնութիւններն ու արգելքները յիշեցնել, կարևորութիւն իսկ չեն ընծայեր, և արդարև եկեղեցւոյ խնդիրները Ռոման կառավարութեան ձեռամբ կարգադրուելով պէտք չեն զգար դիմել Պատրիարքարանի և այլուր։ Այս առթիւ կը յիշատակեմ այն ժպիրհ պատասխանն մի անպատկառ թաղականի որ իրեն ուղղուած դիտողութեանէս վշտացած գոչեց. — «Եթէ թաղականքս ուզելու լինինք Եկեղեցին կը ծախենք» որպէս թէ Եկեղեցւոյ հէնցէրը իրեն յանձնուած լինէր հօրմէն։

Իրաց այս տխուր վիճակէն կը ծագի անհանձ իշխանութիւն աշխարհական պաշտօնէից ըստ քմաց գործելու ո՛չ այ արժանաւոր յարգանս՝ կղերական, որոնց բաղումք տեղական բարոյից համակերպած են չի յարգելով Հայաստանեայց պարզկրօն եկեղեցւոյ կանոններն ու աւանդութիւնք և մեծով պատասխանատու առաջի Աստուծոյ միայն և իւրեանց խղճին։ Սոյա մէջ կը գտնուին այնպիսիք, զորս անկարելի է աշխարհականէ մը զանազանել իրենց Ներքաճաշակ ֆոֆոֆոֆով և ֆոֆոֆոֆ գլխարկովը և աղնուական պարոնի մը հետ չ'շփոթել, պարահանդիսից, ընտանեկան երեկոյթներու և բարձր ընկերութեանց մէջ տեղ և յարգանք ունենալով Հայ կղերականը բաց ճակատով կը նախագահէ թղթախաղի սեղանոյն կամ կը խընկարկէ Բազոսի տաճարին ամենայն ջերմեռանդութեամբ։

Արդ՝ երբ ամեն ինչ կ'սպասեմ՝ (կարծեմ բացի բարոյականէ) կարելի՞ է անտարբեր մնալ եկեղեցականաց այս չար սովորութեանց և անպատասխանատու զանցառութեանց հանդէպ և նկատել ազգայնոց այս անտարբերութեանը վրայ դէպի Հայ եկեղեցիներէ և վարժարաններէ. և որ չեն ուզեր միանալ 'ի սփիւռս աշխարհի գտնուած Հայոց հետ և օգտակար հանդիսանալ իրենց անսպառ հարստութեամբը, ոմանց արուեստի հմտութեամբը կամ ոմանց գեղարուեստից և այլ տպանդովը։

Մխիթարական է սակայն Տէր—Խմբագիր, որ ի

Ռումանիա ունեցած յաճախակի ուղևորութեանս առթիւ բախտ ունեցած եմ տեսակցիլ Ազգայնոց սմանց հետ և գիտնալ իւրեանց փափաքը, որ է անյապաղ ունենալ 'ի Ռումանիա մշտնջենական այցելու հովիւ մը (որպէս երբեմն) կարգեալ 'ի Կ.Պոլսոյ Պատրիարքարանէ. լեզուագէտ և Ռումանագէտ պրպ հետ ուղղակի յարաբերութեան մէջ մտնան բոլոր միւս եկեղեցեաց կրօնականք հրահանգ ստանալու համար ամէն ազգային խնդրոյ մասին, որ կարենայ իւր խնամոյ յանձնուած թեմերը շրջելով տարւոյն մէջ ուսումնասիրել տեղական խնդիրներն առ 'ի բարւօք լուծումն։

Անհաւասիկ, Տիար Խմբագիր, այսոքիկ են իմ նկատողութիւնքս զորս ազգային նախանձախնդրութեամբ ուզեցի հրատարակել Ձեր անկողմնակալ թերթին մէջ և մատուցանել այս պատեհութեամբ իմ անկեղծ շնորհակալեացս հաւատին։

ՄԵՂՈՒ

ԹԻՖԼԻԶ 6 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1892

Տեղւոյս եկեղեցիների պատգամաւորների ընտրութիւնները արդէն վերջացած են. բայի երկու եկեղեցւոց, ուր անկարգութիւնների պատճառով անորոշ ժամանակով յետաձգուած են։ Եթէ հաւատալ «Մշակ» լրագրի արբանեակներին, պատգամաւորների մեծամասնութիւնը պ. Արծրունու համախոհներ են։ Թեմական պատգամաւորների թիկնածու անուանում են քաղաքագլուխ, սենեկապետ Իշխան Երկայնաբազուկ Արղութեանին, «Մշակ» «Արձագանք» և «Նոր–Դար» թերթերի խմբագիրներին՝ Արծրունի, Աբգ. Յովհաննէսեան և Սպանդարեան, կասկած չի կայ որ ընտրողները պիտի շրջահայեաց վերաբերուին իրենց սրբազան պարտականութեան և այնպիսի անձ ընտրեն որը Հայ եկեղեցւոյ հետ ամուր կապուած լինի։ Թէև «Մշակ» յառաջադէմ անուանեալ թերթի աշխատակիցները ամէն դիպուածում աշխատում են որ Արծրունու թիկնածութիւնը ապահովուի. սակայն ըստ մեր համեստ կարծիքի սա մի մեծ սխալ քայլ է պ. Արծրունին երբէք Հայ եկեղեցւոյ բարեկամ չէ եղած. մի խմբագիր՝ որը բացարձակ յայտնում է թէ Հայ եկեղեցին կարօտ է վերանորոգութեան, մի խմբագիր որ Հայ Լուսաւորչական կրօնը աղանդ է համարել, մի խմբագիր որը կարծում է թէ Կաթողիկոսները ամուսիններ պիտի ունենան, մի խմբագիր որ քարոզում է թէ ապագայ Հայոց Կաթողիկոսի առաջին գործը պիտի լինի Ա. պահարգանի խնդիրը և որա թեմեութիւնը – շատ բնական է որ Հայոց եկեղեցւոյ պիտի ընտրութեան գործին ամենայն իրաւամբ չի կարող մասնակցիլ։ Պ. Արծրունին ասում է Հայ կղերը, Հայ հոգևորականութիւնը պատիւ չէ բերում ազգին, ... քաղաքականութեան էլ գլխաւոր նպատակն է վայր ձգել Հայ հոգևորականութեան հեղինակութիւնը ժողովրդի առաջ, և ամէն միջոցի դիմում է որ այսու հետ ոչ մի Ցաճկահայ եպիսկոպոս չը բարձրանայ Կաթողիկոսութեան գահի վերայ։ Պ. Արծրունին ասում է «չիք փրկութիւն Հայ Ազգի զատ Արիստակէս Եպ. Սեդրակեանի։

. . . . . քաղաքականութիւնը հաւատ չէ ընծայում Ցաճկահայ եպիսկոպոսների ճանաչելով նրանց աւելի եկեղեցասէր և հաւատարիմ հովիւներ Ս. Լուսաւորչայ կրօնին, իսկ Արիստակէս Եպ. Սեդրակեանը ասում է Ս. Լուսաւորչայ գահը սրդոյ մէջն է և այդ սուգից ազատողը. . . . ։ Ընթերցողի համար այսքանը բաւական է որ թէ Արիստակէս Եպիսկոպոսի Կաթողիկոսութիւնը և թէ Արծրունու պատգամաւորութիւնը պիտի ջրուի։

Մի նպաստիւն ևս հաղորդում եմ. Սուքիաս և Ներսէս Եպիսկոպոսները, որոնք Երեմիայ և Արիստակէս Եպիսկոպոսների շնորհիւ աքսորուած էին, ինչպէս խռովարար և կառավարութեան ըժէմին հակառակ անձինք, այժմ Պետերբուրգ են գտնվում, և շուտով վերադառնալու են Ս. Էջմիածին մի քննիչի հետ միասին։ Սրբազան Երեմիայ ինքնակոչ տեղակալը այն ասիճան խոհեմ և իր կոչման համապատասխան հոգևոր հայր է որ ինքը առիթ տալով միակ պատճառ դարձաւ այս երկու բարձրաստիճան Հայ Եպիսկոպոսների աքսորման և չի պաշտպանեց Եկեղեցւոյ և Ազգի պատիւը։

Հասարակութեան հասկացող դասը կամենում է տեսնել ապագայ Կաթողիկոս Մատթէոս Իզմիրլեան կամ Սահակ Խապայեան Եպիսկոպոսներին իբրև ամենաարժանաւորների։

ԹԻՖԼԻՍՑԻ

ԴԱՎՐԷԺ 16 ՅՈՒՆՎԱՐ 1892

Պատուարժան լրագրոյդ թիւ 4ով քաղաքիս վերայ մի նկարագիր կարդացինք. ուրախ եմք տեսնելով որ «Դանուբ» ոչ միայն զՊուլկարահայս

և զԻուսմանահայս կ'առնու իւր ուշադրութեան, այլ և ուրիշ երկիրներու Հայերն ալ, և նոցա վիճակին վրայ յօդուածներ կը հիւրընկալէ իւր սիւնակաց մէջ, որոյ վասն մեզ ևս կը փափաքիմք Պր. Ուղևորին պակաս թողուցած կէտերը լրացնել և նորանոր լուրեր ևս տալ։

«Ուղևորը» շատ ճիշտ դիտողութիւն արած է Պարսկահայոց Ցաճկահայերի դէմ ունեցած եղբայրասիրութեանը մասին. սոյդ է թէ այս եղբայրասիրութեան յոսի ոգին կայ մեր մէջ և մեք կը կարծեմք թէ Ռուսահայերէն յառաջ եկած է այս վատ ունակութիւն, զի նորա միշտ յանդգնած են «հոսհոս» կայլն անուանել զիւրեանց Ցաճկահայ եղբարս. և որովհետև Պարսկահայքն ևս միշտ 'ի յարաբերութեան են Ռուսահայոց հետ, սոցա գաղափարներն և կարծիքներն, առաւել կամ նուազ, ընդունած են, ուրեմն ճիշտ իրացուցած են։

Այս տողերը գրողը որ երկար մնացած է 'ի Պոլիս և յայլուր, կարող է վկայել թէ Պոլսեցիք կամ առհասարակ Ցաճկասանցիք կը գուրգուրային մի Ռուսահայի վրայ, երբ սա այցելէր իրենց քաղաքը, կը պատուէին կը հիւրասիրէին, մինչդեռ իրենցմէ մին եթէ պատահմամբ Ռուսաստան գընայր, թողումք պատիւներ, պարսաւ կ'ընդունէր իւր Ռուսահայ եղբօրմէն, զի սա կը յանդգնէր ծաղրել Ցաճկահայոց բարբառը, առանց 'ի հաշիւ կարենալ անելու թէ ամէն երկիր իւր գաւառաբարբառը ունի և յանյիշատակ ժամանակաց հետէ Ցաճկահայոց ոճը տարբեր է, Ռուսահայոցն՝ տարբեր. Ցաճկահայերը աղնուաբար վարուած են իրենց Ռուսահայ եղբարց բարբառին համար, ոչ թէ ծաղրելը այլ ծիծաղիլ անգամ մտքերնուն չէ անցած. ինչ որ է. թողումք այս կէտերը և «Ուղևոր»ին հետ մաղթեմք որ այս խորոշական ոգին վերնայ մեր ազգի մէջէն։

Իրր դիտողութիւն այստեղ պարզել աւելորդ չեմք համարիր թէ Ռուսահայք Պարոնեանի նման անուանի երգիծաբանի մը լիշատակին համար ամենևին հոգեհանգիստ չկատարեցին, իրենց լուսաւորութեան կեդրոն համարուած Թիֆլիզի մէջ, մինչդեռ Ադամեանի համար կատարուեցան հոգեհանգիստներ. ինչո՞ւ այս խորոշական ոգին Պարոնեանի և Ադամեանի համար, եթէ Ադամեան ճարտար էր իւր արուեստիս, ոչ նուազ էր և Պարոնեան իւր ճիւղին մէջ. թողումք ամէն բան, Պարոնեան մի առաւելութիւն ևս ունէր որ Դէ էՐԷՆ էր, մինչդեռ Ադամեան՝ ոչ. և որչափ որ գիտեմք, Հայաստանեայց Եկեղեցին Կաթողիկի հաւատ հոգեհանգիստ չկատարեր. ոմանք գուցէ մոլեռանդութիւն համարին մեր այս տողեր, բայց այնպէս չէ, մեք 'ի տղայ տիոց մեր պաշտելի Եկեղեցւոյ ծոցը մեծցած և դէպ ի նա մեծ յարգանք ունիմք, չեմք կարող հանդիստ լինիլ խղճով, եթէ նորա օրինաց մին զեղծուի և այն ալ մանաւանդ մի Հռովմէականի համար։

Բայց բաւական չեղեցանք մեր նիւթէն, դառնամք. Ռուսական կառավարութիւն 200 թուման կը տայ Դավրիժու արական վարժարանին. Ուղեւորը սխալեր է հիւպատոսին վերագրելով այս տուրք հաստատելն, Կառավարութիւնն է որ նորա միջոցաւ կը յանձնէ Ս. Հօր։

Ուղևորը չէ յիշատակած թատրոնը, սեպհականութիւն Ազգին, ուր ներկայացուցմներ կը տրուին. բաւական ժամանակէ 'ի վեր դադրած էին թատերական ներկայացմունք, բայց վերջերս ձմեռուան եղանակին պատճառով սկսան. սոյն անգամ ներկայացուցին Մեծն Ներսէս Ողորմելագութիւնն հանդերձ մի կատակերգութեամբ և երկրորդ անգամ, Դուրեանի «Սև հոգեր»ն մի կատակերգութեամբ նոյնպէս. հաստատութիւն ընթերցարանի համար է։

Քաղաքիս մէջ կայ նորահաստատ մի կիրակնօրեայ վարժարան չափահասներու համար, ուր կ'աւանդուին Հայերէն (գիր և ընթերցմունք), Ազգապատմութիւն և թուաբանութիւն, բաւական թուով աշակերտներ կան. յարատևութիւն կը մաղթեմք թէ աշակերտելոց և թէ ուսուցչաց։

Իրր վերջին լուր հաղորդեմ Ձեզ որ վերջերս Պարսիկներու կողմէ մի առևանգութիւն տեղի ունեցաւ յանձին մի Հայ օրիորդի, զոր տարին կրօնապետի տունն և անդ կը ստիպէին որ հաւատափոխ լինի։

Սրբազան Առաջնորդն իմանալուն պէս, իսկոյն մի քահանայ և մի բարապան ուղարկեց կրօնապետի մօտ և խստիւ պահանջեց աղջիկը. կրօնապետը ստիպուեցաւ տալ զնա Հայ քահանային որ տարաւ Սրբազանի մօտ և անտի զրկուեցաւ իւր տունը. լիովին կը հաստատեմք «Ուղևոր»ին գրածներն 'ի մասին Մխիթարեան Ստեփաննոս Սրբազանի գովելի յատկութեանց և քաջարի հովուապետութեան և երկար կեանք կը մաղթեմք նմա։

ԼԵՒՈՆ

ԱԹԱՆԱՍ [*]

Խոժոռադէմ Ամթանաս
Էր ինն այսքան խստանաս?
Որ ոչ կամք են եւ ո՛չ իղձ,
Պարապիլ քոց խմաստից:
Կորիցէ՝ քո այր ուրեն,
Որ միշտ քաղէ զիմ հոգին,
Օշ թէ լեալ էր իմ անբան!
Եզն չծեալ 'ի գոռթան:
Գնան տեսանել զանողոք
Զերեսս քո ինն 'ի մորմոք
Եւ տրորել ծաղիկ տես
Ի տես քոյին ցնորից:
Ո՞ ինչ պետեն քո ուսմունք?
Գ՚ս ցաւագին սկզբունք,
Այն ինչ ոսկի եւ արծաթ
Ըզ մարդն առնեն միայն մարդ:

ՄԵՍՐՈՎԲ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

Խարտեաշ չքնա՛ղ Ամթանաս,
Էր զիս խնամել ո՛չ անտաս
Երբ տեսանեն զիմ ջերմ իղձ,
Պարապիլ քո խմաստից:
Օրհնեսցի քո այր ուրեն,
Որ միշտ սիրտիս զիմ հոգին,
Ախ թէ չիցէ քո հանձար!
Ազնիւ կենացս միայն ճա՛ր:
Անշուշտ եղեց ես անբան,
Եզն չծեալ 'ի գոռթան.
Եւ տրորեսցէ ծաղկեալ տես
Ցիմար փարթամն աշխարհիս:
Ո՞ ինչ պետեն զանձք եւ փառք
Ոսկի արծաթ ժանգանարք,
Այն ինչ ուսմունք եւ արհեստք
Զմարդն առնեն միայն մարդ:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ ՇՄԱՒՈՆԵԱՆ

Հառաքեաց Ն. Ատրոնի

ՃՈՒՐՃԷՎՕ 17/29 ՓԵՏՐՎԱՐ 1892

. . . . Տէր և Խմբագիր «Դանուբ» ազգօգուտ լրագրոյ.

Հաճեցէք Ձեր անկողմնակալ և անկեղծ թերթին մէջ հիւրընկալել ներկայս, անցեալները Պուքրէշ այցելելով բաղդ ունեցայ պատրիարքարանը Հայկական եկեղեցին և երկսեռ վարժարանը։ Շնորհիւ տեղւոյն բանիբուն և գործունեայ Աւագերեց քահանայ Արժանապատիւ Տէր Յարութիւն Անդրէասեանի, եկեղեցին պայծառ և փայլուն վիճակ մ՚ունի մեր երկանկայիշատակ նախնեաց ծէսին համեմատ. ամբողջ Պուքրէշցիք մեծ համակրանօք կը խօսին նորին արժանապատուութեան մասին մանաւորապէս նորա բարեսրտութեան հայրենասիրութեան և հեզահամբոյր բնաւորութեան մասին, որոնցմով արժանացած է տեղացւոյ սիրոյն ու համակրութեան, արդէն նորին արժանապատուութիւնը իր 3 տարի յառաջ Քէօսաէնճէի մէջ վարած քահանայապետութեամբը, ուր խակապէս տառապելոց հայր մ՚եղած էր. զրկեալին պաշտպանելով, բանտարկեալին բարեխօսելով և աղքատին օգնելով։ Երանի թէ մեր ազգին մէջ մեծ լինէր այսպիսիներու թիւը որոյ շատ պէտք ունի թշուառ ազգը։

Նոյնպէս Պուքրէշի Հայերէն լեզուոյ ուսուցիչը Տիար Պիպէրճեան ուսումնասէր և աղնիւ մի անձ է. ամեն ջանք 'ի գործ կը դնէ մայրենի լեզուն Հայ մանկտւոյն ուսուցանելու, բայց 'ի զուր. քանի որ հայրեր մայրեր չեն ուզեր որ իրենց զաւակունք Հայերէն սովրին, ուր կը մնան ուսուցչի մը ջանքերն. Հայ վարժարանի մէջ տեղի օտարազգի աշակերտներ կան, որչափ որ Հայ կայ։

Գրեթէ Բուսմանիոյ բոլոր Հայաբնակ քաղաքներն շրջագայեցի. ուրախութեամբ վերահաստատեցայ որ, Մարսիլիոյ յայտնի խաչագողի ինչ լինելը ամեն ոք հասկացել է. իր մասին ամեն տեղ անեպատ կը խօսին և բոլորովին զզուած են իր վատ ընթացքէն. որովհետ միշտ խաբէութեամբ ժողովրդեան դրամը կորզել է ու փոխարէն 0000ներ ցոյց տուել է. իր թերթը և ոչ մի տեղ պատիւ չունի բաժանորդաց մեծագոյն մասը դադրած են ընդունել իր թերթը. իր մասին հին և նոր շատ գրելիքներ ունիմ եթէ գործերս ներէն պիտի գրեմ զայնս Ձեզ. բայց այսօր իրեն մի փոքրիկ շահասակութիւնը գրելով պիտի ապասեմ թէ ինչ բացատրութիւն պիտի տայ այդ մասին. տակէ 10 տարի յառաջ Կուկասիոյ Հայրենասիրական մի ընկերութեան կոդմանէ մի մաս զէնք կը յանձնուի սոյն յայտնի խաչագողին, որպէսզի Վանայ Հայ գիւղացւոյ ձրի բաժնէ. որով կարենան ինքզինքնին պաշտպանել աւազակաց դէմ, իսկ մեր շահամոլ ազգասէրը դրամով կը վաճառէ Քուրդերու այդ զէնքերը և դրամը գրպանը կը լեցնէ. ազգասիրութիւն ալ ըսուելէն վերջը ասանկ ըլլալու է։ Տեսնենք ինչպէս պիտի պատասխանէ մեր սոյն դիտողութեան որ իր ջիգերտն շատ պիտի դպչի ճշմարիտ ըլլալովը։

ԱՍՏՂԻԿ

---

[*] Ամթանաս (Minèvre) ըստ Դից. է չաստուածուհի իմաստութեան արուեստից եւ պատերազմի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէ մեզ կը գրեն հետեւեալը.

Հայ Կաթոլիկաց Պատրիարք Գեր. Ագարեան. մարմարիոնէ մի խաչ կանգնել տուաւ Պետրոս Ադամեանի գերեզմանի վրայ եւ գերեզմանի շուրջը պատել տուած է երկաթեայ վանդակներով սպիտակ մարմարիոնի, վերայ գրուած է հետեւեալ սեւ տողերը.

ՊԵՏՐՈՍ Ն. ԱԴԱՄԵԱՆ

Ծնեալ 'ի Կ. Պոլիս յամի Տեառն 1849.

Քերթող քաջ, Նկարիչ յաջողակ, Իմաստասէր կորովամիտ. կենդանի հաւատով եւ յուսով հանգեաւ 'ի Տէր յամի Տեառն 1891 'ի 4 Յունիսի.

ՈՂԲԱՑԵԱԼ ՅԱՄԵՆԵՑՈՒՆ

Մասկուայէ կը հաղորդեն Թիֆլիզի «Նոր-Դար»ի թէ նոյն տեղի Հայ հասարակութիւնը յայտնի բանաստեղծ Սրմբատ Շահազիզեանի մահկանացուի եւ գրականական գործունէութեան երեսամեակ յոբելեանը պիտի տօնուի մի քանի ամիս յետոյ, որոյ համար մի մասնաժողով է ընտրուած, եւ մտադրութիւն կայ եղեր հանդիսին կարելւոյն չափ չքեղ փայլ տալ.

Բարիզի մէջ մի այնպան պիտի կանգնեցնեն Տէօֆրաստ Ռէնասսի յիշատակին որ մամուլի հայրն կը համարուի 'ի Ֆրանսա նա էր առաջինը որ 1631 թուին հիմնեց „La gazett de France"անուն թերթը.

Յունվար 26ին Նիւ-Եօրքի „Hotel Royal"'ի մէջ հրդեհ ծագելով մէկ ժամուան մէջ մոխիր է դարձած կրակին զոհ գնացածներու թիւը 120 հոգւոյ մօտ կը հաշուի.

ՍՈՒԼԹԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆ որով հաստատուած է նոր Խտիվն 'ի գահ Եգիպտոսի, կ'ընթանայ սապէս.—

«Պահեսց'է Ամենակարողն զՆորին Կայսերական Վեհափառութիւն Սուլթանն, զմեր օգոստափառ տէր, յար 'ի գահ իւրոց փառապանծ նախնեաց.

«Երկու հեռագիրք. մին եգիպտական նախարարաց ժողովոյ Վսեմ. Նախագահէն եւ միւսն Վսեմ. Մարէշալ Ղազի Ահմէտ-Մուխթար Փաշայէն ուղղեալ կը ծանուցանեն թէ Ն. Բ. Թէվֆիկ Փաշա, Խտիվ եգիպտոսի, որ թոքատապէ բռնուած էր, յետ սակաւօրեայ տառապանաց վախճանած է յերեսաց տաժանակիր ախտին, ժամը 2-ին, անցեալ հինգշաբթի գիշեր ուրբաթ լոյս.

«Ընկալցի՛ Աստուած զհոգի նորա.

«Ողբացեալ Խտիվն, յորէ իւր անուանման 'ի խտիվութեան Եգիպտոսի, նշանակելի՛ հանդիսացեալ էր իւր անսահման անձնուիրութեամբ առ կայսերական գահն Խալիֆայական, եւ 'ի հեճուկս մնծամեծ դժուարութեանց կացութեանն, յաջողեր էր լաւ մատակարարել զերկիրն։ Ուստի եւ նորա կորուստ խորապէս զգածեցուցած է զՆ. Կ. Վ. Սուլթանն եւ մեծ վիշտ պատճառած է ամենուն։

«Որպէս ծանուցուած է Պաշտօնական Կաշէտոյ, Ն. Կ. Վ. Սուլթանն իւր անսպառ բարութեամբ բարեհաճեր է Եգիպտոսի խտիվութեան կոչել, որոց գահ թափուր մնացած էր մահուամբ նախորդին, զՆ. Բ. Ապպաս Հիլմի Փաշան, անդրանիկ որդին վախճանեալ Խտիվին, եւ այս ըստ տրամադրութեանց կայսերական հրովարտակաց շնորհելոց յանցելումն 'ի կողմանէ վեհապետական իշխանութիւն վարող Խալիֆին։»

«ՀԱՅԿ»

Յոյն Կառավարութիւնն որոշած է թէ այսուհետեւ Յունաստան եկող օտարականք պարտին կրել անցագիր վաւերացեալ յոյն հիւպատոսարանէ մի։ Առ այս Տիար Տէլի Եորկիս, արտաքին գործոց նախարար, հրաւիրած է օտար տէրութեանց ներկայացուցիչներն յԱթէնս ծանուցանել նաւային ընկերութեանց որ այսուհետեւ իրենց նաւերու մէջ չընդունին այնպիսի անցագրէ զուրկ ճամբորդներն։

Օտար ներկայացուցիչք պատասխանած են թէ նաւարկութեան ընկերութիւնք սոսկական ընկերութիւններ լինելով՝ չեն կրնար նոցա հրահանգ տալ այդ մասին։

«ՀԱՅԿ»

Գերմանիոյ բնակչաց ամենահարուստն Պ. Քրուբ հանրածանօթ, թնթանօթի եւ պողպատեղինաց անուանի գործարանապետ յէսէն, անցեալ տարի 6,380,200 մարքի եկամուտի վերայ տուրք վճարեր է. եւ որովհետեւ նախնթաց տարւոյ եկամուտն 4 միլիոն 750,000 մարք հաշուած են, ուստի վերջին տարւոյ մէջ 67 հազար Անգղիական ոսկիի, նոր եկամուտ աւելցած է։

Անցեալ 1891 տարի Միացեալ Նահանգաց մէջ 103 հոգի կախաղան հանուեր են դատաստանաւ 185 եղեռնագործք ուղղակի ժողովրդեան կողմանէ սպաննուեր են առանց դատաստանի. եւ 3400 էն աւելի մարդասպանութիւնք տեղի ունեցեր են։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Դանուբ Գետը այ եւս բացուած է. ամսոյս 19 չորեքշաբթի օր է սկսաւ շոգենաւերի երթեւեկութիւնը։

Թիֆլիզի Նոր-Դար ի մէջ կը կարդանք հետեւեալը հաստատ աղբիւրից լսեցինք, որ Յունվարի 23-ին Շամախում 83 տարեկան հասակում, վախճանուել է հանրահռչակ Սարգիս վարժապետ Համբարձումեան Բողոքականապետը։ Սրա մահն անշուշտ մեծ ցաւ պէտք է պատճառէ պ. Արծրունուն։

Ցաղ կ-Նայ+ պարտին ամէն օր շարժման մէջ դնել իւրեանց մարմինն եւ մանաւանդ քալել։

Պարելէ զգուշանալ մանաւանդ յղութեան առաջին ամսոց մէջ։

Ցանկարծ եւ ուժգնութեամբ վեր չ'բառնալ իւրեանց թեւերն։ –Ծանր բաներ չ'վերցնել։– Խոհեմութիւն է կառք չ'նստիլ առաջին ամսոց մէջ. վասնզի ճանապարհաց անհարթութեան պատճառաւ կառքը շատ կը սասանի եւ վտանգի տեղի կուտայ։

Թոքախտ (Phthisie pulmonaire) ոչ՝ միայն մարդոյ 'ի մարդ կը փոխանցէ, այլ եւ թոքախտաւոր անասնոց կաթն ու միսն ալ մարդոց թոքախտի պատճառ կը լինին որպէս փորձով հաստատած են բազում ճարտար բժիշկք։ 1877ին Գաղղիոյ Լիոն եւ Պորտոյ քաղաքաց մէջ թոքախտը գրեթէ ընդհանրացած էր, բայց այնուհետեւ հետզհետէ նուազեցաւ այդ դժնդակ ախտին չարիքն, վասն զի՝ ըստ առաջարկութեան եւ հրահանգաց բժշկաց, քաղաքապետութիւնք ամենայն խնամով փոյթ տարին որ ժողովուրդը չ'ուտէ ախտացեալ անասնոց միսն ու կաթը։

Ակռայի ցաւ և վայրէ յանկերն (եապան սիւնպիւլի)։– Այս վայրի ծաղկին թարմ տերեւն՝ որ դիւրաւ կը գտնուի ամեն տեղ, եթէ ակռայի ցաւ ունեցողը ծամէ, ակռային ցաւն իսկոյն կանցնի։

Այրածի համար դեղ։ –Եթէ այրած տեղն ածուխի նման սեւ մնայ՝ առանց ժամանակ անցնելու դիմել առ բժիշկն, իսկ եթէ միայն մորթը քիչ մը այրած է այրած տեղը պաղ ջրով թրջուած լաթ մը դնելով փոխել յաճախ եւ կամ ջուրին մէջ պաղեցնել, շաքար, եւ այլք, աւելցնել որպէս զի աւելի ազդու լինի. բայց եթէ այրելէն վիրջը ուռենայ եւ ջուր լցուի՝ այրած տեղին վրայ դնել սերի սպեղանիք։

Քրտինքն հոտը կանցնի երեսէ, ձեռքէ եւ ոտքերէ, եթէ երկու փոքր դգալ անուշադրի ոգի մէկ քիլօ ջուրի մէջ խառնելով լուայ երեսն, ձեռքն ու ոտքն։

Օրիորդի մը օժիտը։– Անհրաժեշտ պէտք է որ գլխաւորաբար հետեւեալք գտնուին ամուսնութեան պատրաստուած օրիորդի մը մտոտկին մէջ։

— Դիանայ կերակուր եփել, կար կարել, հանդերձ նորոգել, հիւանդ խնամել, մանկատածել, սպասաւորի կամ սպասուհւոյ հետ վարուիլ, տան մաքրութեան հոգ տանիլ, նեղ եւ բարձրակրունկի կոշիկ չ'հագնիլ, թոքերուն եւ կուրծքին վնասակար քորսէն չը գործածել, զուարթերես եւ քաղցրաբարոյ լինիլ, համեստ ու վայելուչ հագուիլ, գաղտնապահ լինիլ, զրախօսութեամբ ժամավաճառ չ'լինիլ, վարուց եւ բարուց ապականիչ վէպերէ եւ այլ այսպիսի գրուածներէ զգուշանալով կարդալ բարոյական եւ տնտեսական կենցաղօգուտ գիրքեր, իւր գիրքին ու վիճակին համեմատ անձի մը հետ ամուսնանալ, թէ եւ թիկունք լինիլ ամուսնոյն։

●●●